2126.913844

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«23» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0059-21

Ձեռնարկողը՝ **«ՀԱՅՐԵՆԻՔ ՇԻՆ» ՍՊԸ**
քաղաք Երևան, Անդրանիկի 120, բն. 37

Գործունեությունը՝ ***Շենգավիթ վարչական շրջանի Մ.Ֆրունզեի փողոց 10/4 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ***
Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0059-21

<<23>> 03 2021թ.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մ. Ֆրունզեի փողոց 10/4 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ՀԱՅՐԵՆԻՔ ՇԻՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ «Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Երևան համայնք, Շենգավիթ վարչական շրջան

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մ. Ֆրունզեի փողոց 10/4 հասցեում «ՀԱՅՐԵՆԻՔ ՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի «ա» ենթակետի, հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 0.405716հա ընդհանուր մակերեսով հողամասի վրա՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասերի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ խառը կառուցապատման:

Գործունեության նպատակն է՝ կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր՝ բաղկացած վերգետնյա և ստորգետնյա հատվածներից: Կառույցը, որի կառուցապատման մակերեսը կազմում է 2430.76մ^2, նախատեսվում է իրականացնել երեք ստորգետնյա և տասնչորս վերգետնյա հարկերով:

Նկարագրական մաս.

Նախատեսվող գործունեության տարածքը մի կողմից՝ տրանսպորտային մոտեցմամբ, հարում է Ֆրունզեի փողոցի վերջնամասին, իսկ մյուս կողմից՝ Բայդուկով փողոցին:

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան հարթավայրի հյուսիս-արևմտյան եզրային հատվածում, Երևան քաղաքի

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

հարավային մասում, որտեղ տարածքի ռելիեֆի հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ունի մեծ թեքություն: Մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակերևույթից 899.0-900.5մ սահմաններում:

Տեղամասում մինչև 37մ խորությամբ փորված հորատանցքով ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել:

Համաձայն նախագծային փաստաթղթերի բնակելի համալիրը բաղկացած է երկու բարձրահարկ բնակելի մասնաշենքերից (երեք ստորգետնյա և տասնչորս վերգետնյա հարկերով): Մասնաշենքերի վերգետնյա և ստորգետնյա շինությունները միմյանցից անջատված են լինելու հակասեյսմիկ կարաններով: Մասնաշենքերի կառուցման համար ընտրվել է ե/բ մոնոլիտ ծածկերով կարկասային համակարգ՝ բաց երանգի տրավերտինի և բազալտի արտաքին երեսպատմամբ:

Երկու բարձրահարկ մասնաշենքերը նախագծված է միաձույլ երկաթբետոնե (ե/բ) շրջանակակապային հիմնակմախքով, իսկ ստորգետնյա մասնաշենքերը (ըստ սեյսմիկ կարանների տարանջատված են 4 ստորգետնյա մասնաշենքեր)՝ միաձույլ ե/բ շրջանակային հիմնակմախքով:

Վերգետնյա 2 մասնաշենքերը տասնչորս հարկանի են, որոնց հիմքերը ժապավենային են նախագծված հիմնային սալից (0.4մ հաստությամբ) և շենքի երկու փոխուղղահայաց ուղղություններով խաչաձև հիմնային հեծաններով:

Վերգետնյա առաջին հարկում նախատեսված են 720.52մ^2 հասարակական տարածքներ՝ 4.20մ բարձրությամբ: Յուրաքանչյուր մուտքի բնակելի հարկերում նախատեսված են 53.2մ^2-ից 130.76մ^2 մակերեսներով 1-ից մինչև 4 սենյականոց բնակարաններ, որոնց թիվը յուրաքանչյուր հարկում 4-5 է՝ կախված հարկերի տարբեր համադրություններից: Բնակելի հարկի բարձրությունը նախատեսված է 3.3մ:

Տիպարային հարկերում բնակարանները ապահովված են լինելու միջանցիկ և անկյունային լուսավորությամբ և օդափոխությամբ: Յուրաքանչյուր բնակարանի համար նախատեսված է բաց պատշգամբ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի տանիքում նախատեսվում է տեղադրել ֆոտովոլտային արևային վահանակներ, որոնք ապահովելու են շենքի մուտքերի և արտաքին դեկորատիվ լուսավորությունը, ինչպես նաև էլ. հոսանքով սնուցելու են վերելակները:

Նախատեսվող կառույցի ստորգետնյա հատվածները իրենց հերթին տարանջատված են 4 մասնաշենքերի, որոնք նախագծված են ժապավենային հիմքերով, մասնաշենքերի երկու փոխուղղահայաց ուղղություններով խաչաձևված են հիմնային հեծաններով: Նկուղային հարկում արտաքին պարփակող պատերն նախատեսված են միաձույլ երկաթբետոնից, կունենան 0.4մ հաստություն և կծառայեն որպես կոշտության դիաֆրագմաներ: Ծածկերը լինելու են միաձույլ ե/բ-ից՝ հենված պարագծով պարզունակների վրա 0.2մ հաստությամբ:

Եռահարկ ստորգետնյա հատվածում, որոնց 2 մուտքերը կազմակերպված են հարավային ճակատի բակային հատվածից, նախատեսված են ավտոկայանատեղիներ՝ ընդհանուր առմամբ 164 մեքենայի համար: Նկուղային հարկում նախատեսված է նաև 8 ավտոկայանատեղի՝ հաշմանդամների համար: Ավտոկայանատեղիները ըստ հարկերի առանձնացված են լինելու հակահրդեհային ինքնափակվող դռներով: Եռահարկ ստորգետնյա ավտոկայանատեղին, որի բոլոր հարկերի գումարային ընդհանուր մակերեսը մոտ 3500մ^2 է, նախագծված է այնպես, որ նշված տարածքը, ըստ անհրաժեշտության, հնարավոր լինի կիրառել նաև որպես ապաստարան:

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒԱՅԻՆ ՕԳՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
РА ЕРЕВАН ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Առաջին (զրոյական) հարկում կազմակերպված են երեք բնակելի մուտքեր, յուրաքանչյուրը 2-ական վերելակներով՝ մարդատար և բեռնատար, ինչպես նաև 20 մուտքեր հասարակական տարածքների համար: Բնակելի մուտքերը կազմակերպված են միջանցիկ՝ բնակիչներին հնարավորություն տալով մուտք գործել շենք արտաքին և բակային կողմից չծխացող աստիճանավանդակներով: Աստիճանավանդակները նկուղային հարկերում, ինչպես նաև առաջին հարկից առանձնացված է հակահրդեհային ինքնափակվող դռներով: Բնակելի հարկերում ընդհանուր միջանցքը աստիճանավանդակից առանձնացված է հակահրդեհային ինքնափակվող դռներով: Բոլոր հարկերի աստիճանահարթակներում նախատեսվում է տեղադրել «ելք» գրությամբ վթարային լուսավորության սարքեր:

Բնակելի համալիրի կողային կանաչ հատվածում տեղակայված կլինեն մանկական խաղահրապարակը, ծաղկանոցը, շվաքարանը և այլ բարեկարգումներ: Բակային հատվածի կանաչ գազոնը տեխնիկապես հարմարեցված կլինի հրշեջ մեքենայի մուտք ու ելքի համար, որի գրունտներում նախատեսվում է փռել գեոտեքստիլ շերտ:

Աշխատանքային նախագծով մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, տեսահսկման համակարգ, որի օգնությամբ կիրականացվի ներքին և արտաքին հսկողությունը, հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգ և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի համալիրի գազաֆիկացումը նախատեսվում է հետագա փուլերում և այս փուլում դեռևս չի իրականացվելու, տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել յուրաքանչյուր բնակարանում տեղադրված անհատական կաթսաներից, որի ներքին ցանցը մոնտաժվելու է պոլիպրոպիլենային խողովակներից: Հետագա գազաֆիկացման դեպքում այս կաթսաները ևս կարող են պահպանվեն՝ հանդիսանալով այլընտրանք գազաֆիկացման ժամանակավոր դադարեցման (օրինակ՝ վթարային անջատումներ և այլն) դեպքում տաք ջրամատակարարումն ապահովման համար:

Բնակելի համալիրի էլեկտրամատակարարումը, ջրամատակարարումն ու ջրհեռացումն իրականացվելու են համաձայն «ՀԷՑ» և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմանի:

Կենցաղային կոյուղու համակարգը նախատեսված է իրականացնել ինքնահոս: Կոյուղին կհեռացվի դեպի գոյություն ունեցող քաղաքային ցանց (Բաղյուկովի փողոցի կոյուղու հոր, նախատեսվող գործունեության տարածքից մոտ 35մ հեռավորության վրա), իսկ կոյուղու կանգնակները նախատեսված են օդափոխության հորանների մեջ:

Անձրևաջրերի և հալոցքաջրերի հեռացումը հարթ տանիքից նախատեսվում է կազմակերպել ջրահեռացման կանգնակներով՝ դեպի շենքի պարագծով նախատեսված ջրհավաք առվակ, որտեղից դրանք կհեռացվեն դեպի քաղաքային կոյուղու ցանց:

Ավտոկայանատեղերի լվացման, հալոցքի և հրդեհամարումից հավաքված ջրերի հեռացման համար նախատեսված են հոսակներ և ջրհավաք առվակներ, որոնցից ջրերը կուտակվում են մերձափոսի մեջ և դրենաժային պոմպով մղվում դեպի մոտակա կոյուղու հոր:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի օդափոխության և օդի լավորակման համար նախատեսված է ներածող-արտածող, բնական և արհեստական օդափոխություն: Բնակելի հատվածի միջանցքներում նախատեսված են ծխահեռացման համակարգեր:

Ավտոկայանատեղիի համար նախատեսված է մեխանիկական դրդմամբ ներածման, արտածման, ծխահեռացման, հակահրդեհային օդափոխության համակարգեր:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարության տևողությունը ծրագրավորվում է 34 ամիս:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՅՑ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER"
ՀԱ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀՈՍ * ՀԱ ԵՐԵՎԱՆ ՍԱՍՈՒՆՅԱՆ 2/1
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների թիվը գնահատվում է առավելագույնը 50 մարդ, որից.

- ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 6 մարդ:
- արհետագործներ և բանվորներ՝ 34 մարդ,
- մեքենավարեր և օգնականներ՝ 10 մարդ:

Աշխատողների կենցաղային պայմանները ապահովելու համար կտեղադրվեն բիոզուգարաններ:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ավտովերամբարձ կռունկ, էքսկավատոր, բեռնատար ավտոբետոնախառնիչ, բուլդոզեր, ավտոինքնաթափ և այլն:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով:

Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին.աշխատանքների անընդհատությունը:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական աղբն է՝ 280մ³ (ոչ պիտանի հանույթ) քանակով և կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 5տ: Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով: Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Շինարարության և շահագործման փուլում առաջացած կենցաղային աղբը Երևան քաղաքը սպասարկող աղբահավաք ծառայության կողմից կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 1488մ³:

Շինարարական աշխատանքների ընթացքում հողային հանույթը կազմում է 38971 մ³ է, որից հետլիցքը՝ 8787մ³ (այդ թվում՝ 240 մ³ բուսահող, որն ամբողջության կօգտագործվի տարածքի կանաչապատման համար): Հողային աշխատանքներից առաջացած մնացած գրունտի հիմնական մասը նախատեսվում է օգտագործել համահարթեցում իրականացնելու նպատակով:

Նախատեսվող շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը՝ համաձայն բարեկարգման և կանաչապատման նախագծի, որը հաստատվել է Երևանի քաղաքապետարանի կողմից, կբարեկարգվի և կկանաչապատվի: Կանաչապատման ընհանուր մակերեսը կազմելու է 1632մ² (40.23%), որտեղ կստեղծվեն կանաչապատ գոտիներ՝ սիզամարգերի, տարբեր ծառատեսակների և ծականոցի համադրմամբ: Բացի այդ բնակելի համալիրի տանիքի որոշ հատվածներ ևս նախատեսվում է կանաչապատել:

Կանաչապատման համար նախատեսված են հետյալ ծառերը և թփատեսակները.
թույա սյունաձև՝ 10, սպիտակ բարդի՝ 21,սիրիական վարդ՝ 13, ծորենի՝ 24, փռվող գիհի՝ 9 ծաղկասածիլ՝ 900 հատ և սիզամարգի սպորտային սերմ՝ 70 կգ:

Կանաչապատ տարածքների որպես ոռոգման ջրի աղյուր կծառայի Մանթաշյան փողոցով անցնող Արտաշատի ջրանցքը: Ոռոգման ցանցը կիրականացվի պոլիէթիլենային

ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЭКОЛОГИЧЕСКИЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՀՈԿ * РА ЕРЕВАН ЭКОЦ * RA YEREVAN SNCO

խողովակներով՝ կից ցողացիրներով և փականներով, կտեղադրվի միջին հզորության ջրապոմպ, որը լիովին կբավարարի կանաչապատ տարածքի լիարժեք ոռոգման պահանջները:

Գործունեության ենթակա տարածքում պատմամշակութային հուշարձաններ, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ժամանակավոր ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու շինաշխատանքների հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են՝ մթնոլորտային օդը, հողը և ջրային ռեսուրսները պահպանել աղտոտումից, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի և արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում,
- օդի որակի չափագրումների իրականացում ըստ անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում,
- նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում՝ փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,
- սահմանափակել մեքենաների արագությունը՝ փոշու քանակը նվազեցնելու նպատակով,
- շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը համապատասխանեցնել ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափագրումներ կիրականացվեն ըստ անհաժեշտության՝ ազդակիր անձանց կողմից բողոքի դեպքում,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- մեքենաների ապահովվում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում,
- հնարավոր վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումների իրականացում՝ ուղղված դրանք պաշտպանությանը շին. գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից (պաշտպանիչ պաստառներ, ջրցանում) և հնարավոր այլ ազդեցություններից,
- վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին,
- վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով,
- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն,
- կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար,
- դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր,
- աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում,

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ ЕРЕВАНА РА
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTRE OF YEREVAN RA
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- կենցաղային աղբի հավաքումը և պարբերաբար հեռացումը անհրաժեշտ է իրականացնել թույլատրված աղբավայրում,
- անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին.աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը և այլն:

Նախատեսված գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների ծախսերի գումարային գնահատումը մոտ 28 մլն. դրամ է, որը կազմում է գործունեության ընդհանուր նախահաշվի արժեքի մոտ 1%-ը:

Պատճառաբանական մաս.

Համաձայն նախնական հայտի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Շենգավիթ վարչական շրջանի թաղապետարանը, ինչպես նաև այլ գերատեսչություններ: Հայտը լրամշակվել է նաև ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գարեգին Նժդեհի 26 հասցեում իրականացվել է հանրային քննարկում, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է.

- առաջնորդվել ՀՀ քաղաքաշինական նորմերով և պահանջներով,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը, արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը,
- առաջնորդվել ՀՀ կառավարության 20 ապրիլի 2002 թվականի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին» պահանջով,
- առաջնորդվել ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018 թվականի N 426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջներով,
- պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերն ու շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաները պարտադիր լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրհեռացման համակարգին,
- տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի,
- շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում նախատեսված միջոցառումների իրականացումն ու ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՀԱՅՐԵՆԻՔ ՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մ. Ֆրունզեի փողոց 10/4 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան